ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու

ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԿՈՐՍՈՒԱԾ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԽՆԴԻՐԸ

(Նախնական հաղորդում. Լիմ անապատի 1282 թուականի վերագտնուած Նոր Կտակարանի առիթով)

Տարիներ առաջ հաշուել ենք, որ չեն պահպանուել, մեզ չեն հասել կամ դեռեւս անյայտութեան մէջ են բանասիրական գրականութեան եւ առօրեայ մամուլի մէջ 1915ից առաջ Արեւմտեան Հայաստանի տարածքում արձանագրուած հայերէն միջնադարեան մատեանների հաշուով 9.000ից աւելի ձեռագիր[1]: Անկասկած, եղեռնի ընթացքում մեր կրած մշակութային կորուստների հաշուառման խնդրի առումով այս թիւն իրականում եղած ձեռագրական հարստութեան սոսկ փոքր մասն է[2], սակայն սա հարցի միայն մի կողմն է, գիտութեան առումով կարեւոր միւսն այն է, որ այսպիսի ձեռագրերի ունեցած նիւթի արձանագրուած՝ յարաբերականօրէն փրկուած մասը շրջանառութեան եւ գործածութեան մէջ դնելու համար առաջնային արժէք ունի հետեւեալը. պէտք է նախ կատարելապէս՝ հնարաւոր ամբողջականութեամբ եւ լաւ մտածուած սկզբունքներով հաշուառել հայերէն ձեռագրերի՝ հայկական եւ այլալեզու մամուլում, զանազան՝ յատկապէս տեղագրական ուսումնասիրութիւնների մէջ գրառուած եւ, յատկապէս՝ անտիպ մնացած բոլոր, ընդհուպ մինչեւ մէկ միաւորի նկարագրութիւնները: Ապա անհրաժեշտ է աւանդական տեսքի, մանրամասն անուանացանկերով օժտուած ծաւալուն հատորներով, նաեւ՝ փնտրտուքի բազմադաշտ օժանդակ ծրագիր ունեցող նորագոյն՝ համակարգչային եղանակներով հրատարակել բոլոր այն նկարագրութիւնները, որոնց հիմք ձեռագրերը չեն մտել ազգային կամ պետական որեւէ հաստատութեան կայուն եւ տեւապէս ապահով պահպանուող հաւաքածուի մէջ կամ էլ ակներեւաբար կորսուած են: Խնդիրն այսպէս դնելու տրամաբանութիւնը հետեւեալն է. հաստատուն եւ ապահով հաւաքածուներում պահպանուող ձեռագրերն այսօր նախ մատչելի են գիտութեանը, ապա՝ իրենց հասանելիք կարգով մի օր նկարագրուելու են. սրան զուգահեռ, ծրագրուած աշխատանքով պէտք է ժողովել, մէկտեղել եւ լաւագոյնս գործածելի դարձնել նաեւ ցրուածին ու կորսուածին վերաբերող յիշատակները, նրանց ընձեռած հնարաւորութիւնները:

---

[1] Հիմնուել ենք մեծ մասամբ հետեւեալ արժէքաւոր աշխատութեան վրայ՝ *Սուրէն Քոլանջեան*, Հայկական կոտորածները եւ մեր ձեռագրական կորուստները.- «Էջմիածին», 1965, Բ-Դ., էջ 96-107, Ե-Է., էջ 133-44. 1966, Ը., էջ 27-37, Թ-Ժ., էջ 88-93. 1967, Ե., էջ 46-57, Զ., էջ 50-5 (անաւարտ). ուրուագծել է 1894-6, 1909, 1915 թթ. Վասպուրականում, Տարօնում, Կարինում, Կեսարիայում, Մալաթիայում, Անկիւրիայում, Արմաշում, Սեբաստիայում ոչնչացուած եւ մասամբ փրկուած ձեռագրական հաւաքածուների պատկերը:

[2] Համեմատութեան լաւ չափանիշ է 1915ին Էջմիածնի մատենադարանի ունեցած ձեռագրերի քանակը՝ 4460 միաւոր, որ այսօր նրա ժառանգորդ Երեւանի Մաշտոցեան Մատենադարանում հասել է 11105ի (սա Հայերէն ամբողջական ձեռագրերի՝ հիմնական հաւաքածուի քանակն է, բոլոր հաւաքածուները միասին 2002 թ. Դեկտեմբերի 31ի դրութեամբ ունեն 17.054 միաւոր):

Այս անելիքի մէջ կարեւոր է նաեւ արեւմտեան աճուրդներում վաճառուած եւ յաճախ վերավաճառուող ձեռագրերի նկարագրութիւնների հաշուառումը. սրանք հիմնականում արեւմտահայութեան խլեակների հետ եղեռնից փրկուել եւ առաջին համաշխարհային պատերազմից յետոյ մտել են եւրոպական եւ ամերիկեան պետական ու անձնական հաւաքածուների մէջ: Ահա ժամանակակցի հաստատումը՝ «1915ի ազգային աղէտը ամայացնելէ յետոյ մեր հազարաւոր եկեղեցիներն ու վանքերը, կողոպուտի ենթարկուեր էին անոնց թանգարաններն ու գանձատունները, հարուստ՝ այլազան զարդ ու սպաներով ու թանկարժէք ձեռագիրներով, որոնց շատ քիչ թիւով մնացորդները միայն 1918ին ու 1922ին սկսան դուրս գալ Կ. Պոլսոյ, Եգիպտոսի, Եւրոպայի ու մասնաւորապէս Մ. Նահանգներու հրապարակներուն վրայ, իբր հնագիտական առարկաներ, ծախուելու համար պետական-ազգային մատենադարաններու եւ անհատ հաւաքողներու: Մեր նախնեաց մտքի եւ ձեռքի վաստակները, ցեղին վերապրողներուն պէս, վայրավատին կը թափառէին գրեթէ ամէն տեղ»[3]: Եւս մէկը. «Ո՞ւր են Անկիւրիոյ եւ Արմաշի ձեռագիրները... չունինք Կեսարիոյ եւ այլ վանքերի կամ մասնաւոր հաւաքածուների ձեռագիրների թիւը, ինչպէս օրինակ Տրդատ եպիսկոպոսի հաւաքածուն էր, որից միայն մի կարեւոր ձեռագիր տեսանք Նիւ Եորքում Մորգանի մատենադարանում*: Ո՞ւր են Ագուլիսի Ս. Թովմա առաքեալի վանքի ձեռագիրները, որոնք կողոպտուեցան հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, որոնցից մի քանի հատորներ միայն տեսանք Ամերիկայում: Երանի՜ թէ նրանք բոլորն էլ Ամերիկա հասած լինէին, եւ պետական հաստատութիւններին անցած, գոնէ չէին կորչիլ գիտութեան համար»[4]:*

Գարեգին Ա. Կաթողիկոս Ցովսէփեանի այս աւաղական թուարկմանը ուշք ենք դարձրել միայն վերջերս, մինչ այդ, տասնամեակներ առաջ արդէն հրատարակել ենք այդպիսի՝ 1903 թ. Ս. Պետերբուրգում հրդեհի ճարակ դարձած եւ անդարձ կորսուած ձեռագրական մի հաւաքածուի ցուցակը[5], որտեղ (էջ 8) խոստացել եւ քայլ առ քայլ «հրատարակութեան ենք պատրաստում» նաեւ նոյն Մեսրոպ Մագիստրոսի գործի մէջ առկայ «մասնաւոր անձանց եւ եկեղեցիների սեփականութիւն եղած» ու չպահպանուած ձեռագրերի ցուցակը:

Իսկ այժմ լիովին պատրաստ է եւ 2003 թ. առաջին ամիսներին լոյս է տեսնելու մեր պատրաստած նոյնպիսի մի այլ գործ՝ «Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, Նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան», որ պարունակում է մամուլի մէջ ցրուած կամ անտիպ մնացած՝ Կեսարիայի, Զմիւռնիայի եւ նրանց շրջակայ հայաբնակ Գըրշեհիր, Էվէրէկ, Թալաս, Թաւլուսուն, Պալակասի, Նիրզէ, Տարսիախ, Մուն-

---

[3] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու, Առաջին հատոր, Կազմեց՝ *Արտաւազդ արքեպս. Սիւրմէեան*՝ կաթողիկոսական լիազօր պատուիրակ Եւրոպայի հայոց թեմին, Փարիզ, 1950, էջ Ա:

[4] *Գարեգին Ա. կաթողիկոս* [*Ցովսէփեան*], Ցիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), 48 նմանահանութիւններով, ՌՆ = 1951, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս, էջ ԺԶ.:

[5] Տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Մկրտիչ Սանասարեանի, Կազմեց՝ *Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեան* (Պետերբուրգ, 1901 թ.), [Հեղինակի «Ընդհանուր ցուցակ»ից հանեց], Խմբագրեց եւ ցանկերը պատրաստեց *Ց. [=Գ.] Հ. [Տէր-]Վարդանեան*, Վենետիկ - Ս. Ղազար, 1981 (135 էջ, նկարագրուած է 121 ձեռագիր):

ճուսուն, Մաղնիսա, Այտըն եւ Էօտէմիշ բնակավայրերում նկարագրուած, այսօր մեծ մասամբ կորսուած 114 ձեռագրի նկարագրութիւն (ուրիշներ արել է Յակոբ վ. Քօսեանը) եւ որ ունի նաեւ Յաւելուածներ՝ Կեսարիայից Պոլիս տարուած ձեռագրերի մի համառօտ ցանկ եւ Տրդատ եպիսկոպոս Պալեանի տպագիր ու անտիպ աշխատութիւնների մատենագիտութիւնը (կազմել է Կարինէ Աւետեանը):

Սկսել ենք պատրաստել նաեւ Գարեգին Յովսէփեան Կաթողիկոսի յիշատակած մի այլ հաւաքածուի՝ «Ագուլիսի Ս. Թովմա առաքեալի վանքի ձեռագիրների» ցուցակը, որի 30 միաւորի նկարագրութիւնները (համարակարգի անհասկանալի անկանոնութեամբ՝ 1-6, 14, 7, 15-18, 21-29, 8-10, 31-35, 37, այլեւ՝ վրիպակներով) տպագրուել են դեռեւս 1911-1915 թթ.[6], սակայն մեծ մասը մնացել է անտիպ: Փնտրել եւ գտել ենք գործի ամբողջական ձեռագիրը՝ «Յիշատակարանք եւ նկարագրութիւնք ձեռագրաց Ագուլեաց, Նկարագրեց Մեսրոպ վ. Մաքսուդեան»[7], որ պարունակում է Ս. Թովմա առաքեալի վանքի 59 եւ շրջակայ գիւղերում կամ այլ տեղերում տեսած եւս 19, ընդամէնը՝ 78 ձեռագրի նկարագրութիւն: Այս ամբողջը վերարտադրել ենք, համեմատել «Արարատ»ում տպուած մասի հետ, ուղղել վերջինիս վրիպակներն ու անհարկի կրճատումները, համադրել Յարութիւն Թումանեանի[8] եւ Երուանդ Լալայեանի[9] քաղումների հետ եւ սկսել նիւթի վերջնամշակումը:

Մինչեւ օրս անորոշ էր նաեւ Գողթն գաւառի Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի ձեռագրական հարուստ հաւաքածուի հետագայ ճակատագիրը. վաստակաշատ վանքի ձեռագրական հարուստ հաւաքածուի հետագայ ճակատագիրը. վաստակաշատ դիւանագիտական դիւանատան 29 Գ. 1912 թ. Հմր 2373 Օ. Եգանեանին յայտնի էր, որ «Կաթողիկոսական դիւանատան 29 Գ. 1912 թ. Հմր 2373 գրութեամբ կարգադրւում է Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս [Տէր-Մկրտչեան]ին էջմիածին տեղափոխել Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի ձեռագրերը: Դժբախտաբար մեզ չյաջողուեց որեւէ հիմք գտնել՝ որոշելու այդ ձեռագրերը բերուել են, թէ ոչ»[10]: Նոյն Եգանեանի տքնաջան աշխատանքի պտուղ բազմա-

---

[6] *Մեսրոպ վ. Մաքսուտեան*, Նկարագրութիւն եւ յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայի առաքելոյ վանուց եւ եկեղեցեացն Վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակերտ գեղջ եւ անձանց մասնաւորաց.- «Արարատ», 1911, էջ 117-27, 218-24, 314-8, 384-8, 460-5, 562-8, 759-66, 846-54, 1003-12. շարունակութիւնը տարբեր խորագրով՝ Վերին Ագուլիսի եւ շրջակայքի ձեռագրերը.- «Արարատ», 1914, էջ 1032-6, 1114-8. 1915, էջ 69-78, 381-8:

[7] Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի դիւան, Մեսրոպ վ. Մաքսուդեանի թղթոց, թղթ. 29, վաւ. 16ա, 16բ՝ զանազան մեծութեամբ 198 թերթ:

[8] А. И, ТУМАНОВ, Армянские древние рукописи монастыря Св. Фомы.- Сворник материалов для описания местностей и племен Кавказа, Вып. XXIX, Тифлис, 1901, стр. 1-18 (վկայում է Թովմա առաքեալի վանքում 70 ձեռագրի գոյութիւն):

[9] *Ե. Լալայեան*, Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան եւ կամ Գողթն.- Ազգագրական հանդէս, Գիրք ԺԲ., Թիֆլիս, 1904, էջ 155-73՝ «Ձեռագիրներ [Սուրբ Թովմայի վանքում եւ Ներքին Ագուլիսի եկեղեցում]». քաղել է 71 ձեռագրի յիշատակարաններ հետեւեալ վայրերից. Ագուլիսի Ս. Թովմայի վանք՝ 50, Վերին Ագուլիսի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղ.՝ 2, Ալաճի գիւղ՝ 3, Մարվանիս գիւղի Ս. Մեսրոպ վանք՝ 1, Ներքին Ագուլիս՝ 4, Տանակերտ գիւղ՝ 9, եւ Դիսար-Դեղսար գիւղ՝ 2:

[10] *Օննիկ Եգանեան*, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները.- Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի. հտ. Ա. Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան. Ներածութիւնը՝ Օ. Եգանեանի. Խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի. Երեւան, 1965, էջ 83. յղում է՝ «Արարատ», 1912, Դ., էջ 292 (այսուհետեւ՝ Օ. Եգանեան):

թիւ ցանկերից մէկի՝ «Ցանկ է. «Խառն ժողովածու (1922-1925 թթ.)»ի «Թաւրիզի Առաջնորդարան» մասում[11] *թուարկուած՝ 13. Գ. 1922 թ. Թաւրիզից Էջմիածին ուղարկուած եւ 6206-7155 համարների միջեւ բաշխուած 83 ձեռագրերի տուեալները համեմատելով Սմբատ Տէր-Աւետիսեանի դեռեւս 1904 թ. կազմած համառօտ ցուցակի*[12] *հետ, պարզել ենք որ Տէր-Աւետիսեանի նկարագրած 124 ձեռագրերի զգալի մասը, բարեբախտաբար, այս 83ի մէջ էր, ուստի եւ այժմ Մաշտոցեան Մատենադարանում է, սակայն մի այլ՝ ո՛չ սակաւ քանակ էլ կորսուած է: Խնդրի քննութիւնն ընթացքի մէջ է, աշխատանքի աւարտից անմիջապէս յետոյ հրապարակելու ենք թէ՛ նկարագրութիւնների եւ ձեռագրերի նոյնացումների արդիւնքը եւ թէ՛ չպահպանուած ձեռագրերի՝ Տէր-Աւետիսեանի նկարագրութիւնները:*

Շատ աւելի բարդ ճակատագիր է վիճակուել Վասպուրական նահանգի թէ՛ ձեռագրական հաւաքածուներին եւ թէ՛ նրանց ցուցակագրութիւններին. ԺԹ. դ. վերջի եւ Ի. դ. սկզբի տարբեր տարիների այստեղ ձեռագրեր նկարագրել կամ նրանց յիշատակարաններն ընդօրինակել են Գարեգին եպս. Սրուանձտեանցը[13]*, Ղեւոնդ վ. Փիրղալէմեանը*[14]*, Յովհաննէս (Օննիկ) Բարաղամեանը*[15] *եւ, ժամանակագրօրէն վերջինը՝ Երուանդ Լալայեանը*[16]*: Կրկին Օ. Եգանեանի ուսումնասիրութեամբ*[17] *պարզուել է, որ 1915-1916 թթ. կազմակերպուած եղանակով, հետագայում էլ պատահական ձեռքբերումների ձեւով Վասպուրականից Մաշտոցեան Մատենադարան է եկել 1473 ձեռագիր: Ե. Լալայեանի ցուցակի տպուած միակ պրակում կայ 480 ձեռագրի նկարագրութիւն. նրանցից Մաշտոցեան Մատենադարան է եկել 281ը*[18]*, իսկ մնացեալ 199ի «մեծագոյն մասը անդարձ կորել է»*[19]*: Ցա-*

---

[11] Նոյն տեղում, էջ 123:

[12] Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի Անտիպ ձեռագրացուցակ Հմր 135՝ *Սմբատ Տէր-Աւետիսեան*, Ձեռագիրք Նախավկայի վանուց Դարաշամբի Ս. Ստեփաննոսի, որ ի Գողթն, 1904 (209 թերթ, 36X22,3):

[13] *Գարեգին վ. Սրուանձտեանց*, Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ, Մասն Առաջին, Կ. Պոլիս, 1879. [Մասն երկրորդ], Կ. Պոլիս, 1884 (2 հատորի մէջ ունի Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերի ձեռագրերի 350 յիշատակարան):

[14] Նօտարք հայոց. Հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ *Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Տ.սպեցւոյ*՝ Վարագայ վանուց վանականի, Կ. Պոլիս, տպ. Նշան Պէրպէրեան, [1883ª], (ունի 1393-1467 թթ. յիշատակարաններ. այսուհետեւ՝ Նօտարք), *Ղեւոնդ վարդապետ Փիրղալէմեան*, Յիշատակարանք կամ Ճշխարք պատմութեան հայոց, հտ. Ա.- Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 6273, հտ. Բ.- Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 4515:

[15] *Յովհաննէս Բարաղամեան*, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի (1906-1907 թթ.).- Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 6333 (121 թերթ, շատ համառօտ նկարագրել է եւ քաղել յիշատակարանները 475 ձեռագրի. Կտուց անապատի՝ 110, Լիմ անապատի՝ 170, Վարագայ վանքի՝ 195):

[16] Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Կազմեց *Երուանդ Լալայեան*, Հրատարակութիւն Հայոց ազգագրական ընկերութեան, Պրակ Ա, Թիֆլիս, 1915. 6 էջ + 1048 սիւն (նկարագրել է 480 ձեռագիր. այսուհետեւ՝ *Լալայեան*, 1915):

[17] Մանրամասն տե՛ս *Օ. Եգանեան*, էջ 93-105:

[18] Նոյն տեղում, էջ 101՝ թուարկում է կորսուած ձեռագրերի ցուցակային համարները, իսկ էջ 102՝ յայտնում է, որ 199ից Հմր 4՝ Լիմի Հմր 76, եւ Հմր 82՝ Լիմի 32 այժմ «Քիւրտեան հաւաքածու»ի մէջ են, իսկ Հմր 33՝ Կտուցի Հմր 230՝ Ս. Պետերբուրգի Արեւելագիտութեան հիմնարկի Հայերէն B 87ն է: Մխիթարեան միաբանութեան առաջարկով խմբագրում, լրացնում եւ հրատարակութեան ենք

ալիօրէն ձեռագրերի ճակատագրին արժանանալով, կորսուել է նաեւ Լալայեանի ցուցակի անտիպ մնացած շարունակութեան մեծ մասը. այսօր կայ միայն Հմր 481-708՝ 228 ձեռագրերի նկարագրութիւնների հատուածը[20], *Լալայեանի Թողօնի միւս կտորների*[21] *մէջ այս ցուցակի այլ մասեր կամ նրան վերաբերող նիւթեր չենք գտել: Սակայն, բարեբախտաբար, կորստից առաջ մնացեալ նկարագրութիւնները Մեսրոպ Տէր-Մովսիսեանն ընդօրինակել եւ տարալուծել է աշխարհի հայերէն բոլոր ձեռագրերի իր ցուցակի*[22] *մէջ:*

պատրաստում նաեւ 1976ից ի վեր Վենետիկի մատենադարանի մաս կազմող «Ցարութիւն Քիւրտեան հաւաքածոյ»ի ձեռագրացուցակը (300 ձեռագրից 250ը նկարագրել է Ց. Քիւրտեանը, 50ը եւ 20 փաթեթաձեւ Հմպիլ՝ մենք). այս հաւաքածուն գոյացել է ցրուածի եւ կորսուողի փրկումով, ուստի եւ նրա շատ միաւորներ մեր թուարկած հաւաքածուներից են: Ըստ այդմ պէտք է ասենք, որ Օ. Եգանեանի նշած առաջին երկուսն են՝ Քիւրտեան Հմր 279 եւ 26 եւ աւելացնենք, որ Լալայեան 23ը (Լիմի 331) այժմ Քիւրտեան 138ն է, Լալայեան 354ը (Կողբանց գիւղ)՝ Քիւրտեան 46ը: Աւելին՝ Աննա Ծիրիանեանն այժմ կարգաւորում է Հռոմի Լեւոնեան վարժարանի ձեռագրական հաւաքածուն եւ նամակով մեզ յայտնել է, որ Հ. Ն. Ակինեանի (Ցուցակ հայերէն ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի Ի Սուրբ Վլաս եւ քահանայապետական Լեւոնեան հայ վարժարանի, Վիեննա, 1961) նկարագրած 113 ձեռագրից բացի, այնտեղ կայ «մօտաւորապէս 60» ձեռագիր եւս, որոնցից վասպուրականեան երկուսին վերաբերող նրա հրապարակումը շուտով լոյս է տեսնելու «Le Muséon» հանդէսում: Այդ ձեռագրերն են՝ 1. Մաշտոց, Արճէշ, ՊՁԱ - 1432 թ., գրիչ՝ Կարապետ, ստացող՝ Մկրտիչ, ծաղկող՝ Մինաս (Լալայեան ցուցակի անտիպ մասում նկարագրուած չէ, սակայն արձանագրուած է՝ Նօտարք, Հմր 102, էջ 100-1), 2. Աւետարան, Եղրդուտի վանք, ՋԺԲ - 1463 թ., գրիչ՝ Ստեփանոս (Լալայեան, 1915, Հմր 260, էջ 619-22, սխալ ընթերցուած՝ ՋԺԲ - 1503 թուականով, հմմտ. Նօտարք, Հմր 248, էջ 215-6): Լալայեանի ցուցակի տպուած պրակի Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ընթերցասրահի օրինակի մէջ Օ. Եգանեանը մատիտով նշանակել է Մատենադարան եկած ձեռագրերի համարները, զուգադիր աղիւսակով նոյնն անկախաբար արել է նաեւ Բեռնար Կուլին՝ Répertorie des bibliothèques et des catalogues de manuscrits arméniens, Par *Bernard Coulie*, Chercher qualifé du Fonds National de la Recherche Scientifique Université Catholique de Louvain, Brepols - Turnhout, 1992, p. 209-14. երկուսի մէջ էլ կան վրիպում-սխալմունքներ, ըստ այդմ՝ նկարագրութիւնների եւ ձեռագրերի բոլոր նոյնացումներն անպայման ստուգում եւ ճշգրտում ենք:

[19] *Օ. Եգանեան*, էջ 101:

[20] *Ե. Լալայեան*, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի.- Հայաստանի Պատմութեան պետական թանգարանի Դիւան, Ազգագրութեան բաժին, թղթ. 134. ունի 353 թերթ, անունների այբբենական կարգով նկարագրութիւն է Սուրբգրային եւ ծիսական հետեւեալ ժողովածուների. Հին եւ Նոր Կտակարան, պարականոն Աւետարանք՝ Հմր 481-493, Աստուածաբանականք՝ Հմր 494-498, Աղօթագիրք (նաեւ՝ Աղթարք, Ուրբաթագիրք, Ցաղագս աղօթից եւլն)՝ Հմր 499-512, Աշխարհագրութիւն՝ Հմր 513, Բառարան՝ Հմր 514-522, Բժշկարան՝ Հմր 523-525, Գանձարան՝ Հմր 526-574, Գաւազանագիրք՝ Հմր 575-576, Ժամագիրք՝ Հմր 577-605, Ժողովածու՝ Հմր 606-620, Խորհրդատետր-Պատարագամատոյց՝ Հմր 622-642, Կանոնագիրք-Դատաստանագիրք՝ Հմր 643-649, Հարանց վարք՝ Հմր 650-673, Մաշտոցք՝ Հմր 674-708:

[21] Լալայեանից մնացած փաստաթղթեր կան նաեւ Հայաստանի Պատմութեան պետական կենտրոնական դիւանում, Գրականութեան եւ արուեստի թանգարանում:

[22] Այս ցուցակի սկզբունքների եւ կառուցուածքի մասին եւ նրա մանրամասն նկարագրութիւնը տե՛ս *Գէորգ Տէր-Վարդանեան*, Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Կենսագործունէութիւնը, «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց», Մատենագիտութիւն, Երեւան, 1999, էջ 69-86,93-123:

Լալայեանի տպուած պրակի շատ կարճ առաջաբանում ասուած է. «Ամբողջ աշխատութիւնը ներփակելու է առնուազը 2000 ձեռագիրների նկարագրութիւն»[23], սակայն զանազան վաւերագրեր[24] ուսումնասիրելով եկել ենք այն համոզման, որ նա նկարագրել է միայն 1525 միաւոր, իսկ այս 2000ն ասելով երեւի նկատի ունէր աշխատանքի արուելիք շարունակութիւնը, այսինքն՝ մտադիր էր վերադառնալ Վասպուրական եւ նկարագրութիւնների քանակը հասցնել 2000ի, այլապէս՝ 2000 թիւը պէտք է համարենք 1525ի դէպի վեր արուած շատ մեծ կլորացում:

Արուած նկարագրութիւնների քանակը ճշգրտելուց եւ նրանց քաղման տեղերը պարզելուց յետոյ սկսել ենք որպէս «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի» Բ. պրակ հրատարակութեան պատրաստել կորսուած ձեռագրերի նկարագրութիւնները[25]: Հմր 481-728 նկարագրութիւններն առնելով Լալայեանի պահպանուած ինքնագրից, իսկ Հմր 729-1525 ձեռագրերինը Մ. Տէր-Մովսիսեանի օրինակումներից, նկարագրութիւնները նախ համեմատում ենք տարբեր տարիների եւ տարբեր տեղերից Մատենադարան եկած վասպուրականեան ձեռագրերի հետ: Նկարագրութեան եւ ձեռագրի կատարեալ նոյնականութիւնը հաստատելուց յետոյ նշանակում ենք վերջինի ներկայ համարը. այսպիսիք հետագայում դարձնելու ենք հին եւ նոր համարների ծանօթագրուած զուգադիր աղիւսակներ: Երբեմն նոյնականութիւնն աներկբայ է լինում, սակայն լինում են արտաքին նկարագրական տարբերի՝ թերթաքանակի, չափսերի, կազմի տեսքի եւ այլ տարբերութիւններ, որոնք նոյնպէս արձանագրում ենք՝ աղիւսակի վերածելու համար: Երբեմն էլ Լալայեանը տեսել եւ ընդօրինակել է յիշատակարաններ, որոնք մեզ հասած ձեռագրերի հիմնականում վերջին թերթերի ընկած լինելու պատճառով այժմ կորսուած են. բնականաբար, սրանք պէտք է հրատարակենք՝ անհրաժեշտ պարզաբանումներով եւ հին ու նոր համարների նշանակումներով: Վերջում պէտք է ամբողջը համեմատենք Սրուանձտեանցի, Փիրղալէմեանի եւ Բարաղամեանի օրինակումների եւ քաղումների հետ եւ տպուելիք հատորի մէջ արտայայտենք վերջիններիս ունեցած աւելի միաւորները եւ տարբերութիւնները:

Այս աշխատանքը եւս ընթացքի մէջ է, տարատեսակ ստուգումները եւ համեմատութիւնները շարունակում ենք, սակայն այսօր արդէն կարող ենք ասել, որ Լալայեանի Վասպուրականի ձեռագրացուցակի 481-1525 համարների շարքից չպահպանուած կամ առայժմ գիտութեանն անյայտ ձեռագրերի քանակն անցնում է 450ը: Կրկին բնականաբար, վերը թուարկուած հաւաքածուների ցուցակների նման, սրանց նկարագրութիւնները եւս հրատարակութեան ենք պատրաստում հնարաւոր չափով յարմարեցնելով տաշեանա-

---

[23] Լալայեան, 1915, էջ 5:

[24] Տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակ Հմր 8.- [Ցանկ հայերէն ձեռագրաց Վասպուրականի՝ Լալայեան ցուցակի անտիպ մասի], 47 գրուած թերթ՝ 21x14,5 սմ, գծումներով տպարանային տետր, 23 տող, ցանկը 92 գրուած էջ՝ 1բ-47ա, ամէն նկարագրութիւն բռնում է բացուածքի երկու երեսի հանդիպակաց տողերը՝ երկու էջի մէկական տող: Հմմտ. *Մեսրոպ արքեպս. Տէր-Մովսիսեան*, Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց.- Երեւանի Մաշտոցեան Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակ Հմր 133, 8/1, թթ. 115-122՝ «Եր. Լալայեան, Ցուցակ Վասպուրականի հայոց ձեռագրերի (որից 1-480 համարները տպուած են 1915 թ., Թիֆլիզ)», որ անտիպ մնացած նկարագրութիւնների համաոտ ցանկն է՝ Համար ցուցակի եւ հին հաւաքածուի, ժամանակ գրչութեան կարգով (նշ. տ., էջ 111-4՝ տպուած հատորի ձեռագրերի ցանկն է):

[25] Առ այս համաոտ ծանուցումը տե՛ս վերը նշուած մեր գրքում՝ էջ 83:

ական եղանակի՝ Մաշտոցեան Մատենադարանի Մայր ցուցակում թեթեւակի վերամշակուած եւ վերախմբաւորուած հարցակարգին ու սկզբունքներին[26]:

*

* *

*Այս հէնքի վրայ գուցէ ինչ-որ տեղ պատահական, սակայն մեծապէս ուրախալի է, որ 2002 թ. Դեկտեմբերի ութին Պ. Պետրոս Ասլանեանը (Շարժա, Միացեալ Արաբական Էմիրութիւններ) եւ Պ. Սարոյ Խուդավերդեանը (Միլան, Իտալիա), Հայաստանում ապրող, ծագումով վասպուրականցի մի ընտանիքից Երեւանում գտնելով, Մաշտոցեան Մատենադարանին նուիրեցին Նոր Կտակարանի 1282 թ. մասնական մի ընդօրինակութիւն: Այսչափ հին ձեռագրեր հազուադէպ ենք ստանում, ուստի պէտք է ստուգէինք. կազմել ենք հայերէն Աստուածաշնչի գրքերի ամբողջական-կատարեալ եւ մասնական ընդօրինակութիւն-ձեռագրերի (աւելի քան 670 միաւորի) մի նախնական՝ դեռեւս աշխատանքային ժամանակագրական ցանկ, որի կարգային աստղանշակիր (կորուսեալ) «*55»րդ համարի ներքոյ անմիջապէս գտանք հետեւեալը. «ՁԼԱ = 1282 թ., Լիմ անապատ Հմր 91: Նոր Կտակարան: Գրիչ՝ Խաչիկ, ստացող՝ Կարապետ քհյ (ՁՄ=1301): Կաշեկազմ, 42+160+12 +54 թերթ, թուղթ, 25x17, միասիւն, բոլորգիր, 20 տող, մէկ խորան: 1634 թ. նորոգուած ի Լիմ, նորոգել տուող՝ Ստեփանոս առաջնորդ, նորոգող՝ Մովսէս, կազմող՝ Սարգիս Եդեսացի: Մասն՝ Գործք Առաքելոց, Թուղթք կաթողիկէայք, Աւետարան Յովհաննու: Մատենագիտութիւն. ՄՏՄ - ԽԱ.՝ Լիմ անպտ. Հմր 91՝ ԼԹվ Հմր 482, ԲՁվ Հմր 149՝ ՄՄ 6333, 33բ, յիշ. Հմր 149: ԺԷ. դ-ի յիշ-ք, հ. Բ., Հմր 831՝ էջ 558 (1634 թ)»:*

Նախ պարզենք այս գրառման «Մատենագիտութիւն» մասի համառօտումները (գրեթէ բոլորը յղուած են նաեւ յօդուածիս ծանօթագրութիւնների մէջ). ՄՏՄ՝ Մեսրոպ Տէր-Մովսիսեանի «Ընդհանուր ցուցակ»ի «Աստուածաշունչ» մասի ԽԱ՝ 41րդ նկարագրութիւնն է, նա առել է Լալայեանի Վասպուրականի ցուցակի անտիպ մասից՝ Հմր 482, Լալայեանը սա նկարագրել է որպէս Լիմ անապատի մատենադարանի Հմր 91 ձեռագիր, որի գերհամառօտ նկարագրութիւնը եւ մի յիշատակարանը կայ նաեւ ԲՁվ՝ Օ. Բարաղամեանի Վասպուրականի ցուցակում, որ այս է. «Գործք առաքելոց, Կաթողիկեայք եւ Յովհ. Աւետարան, 25X17 եւ 6, սկիզբն ու վերջն թափածները նօտրգրով լրացուցած, ծաղկած հասարակ խորանօք եւ զարդերով, մէն մի էջը 19 տող, Կաթողիկեայց եւ Յովհ. միջեւ գրուած յիշատակարանն է... հայոց ՌՁ (= 1631) թուին պակասները գրուած են ի Լիմ անապատ»[27]: Այս բոլորն անտիպ նիւթեր են. տպագիր գրականութեան մէջ կայ միայն նորոգման 1634 թ. յիշատակարանը[28], որ առնուած է կրկին Լալայեանի ցուցակի անտիպ մասից:

---

[26] Հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատոր Ա., Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան. Խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի. Երեւան, 1984, էջ ԽԲ-ԾԳ:

[27] Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. 6333, 33բ, Հմր 149. ունի ձեռագրի 133բ էջի յիշ-ը, թուականը՝ ՌՁ. վրիպակ է, պէտք է լինէր՝ ՌՁԳ.:

[28] Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1621-1640 թթ.), Հատոր Բ., Կազմեցին *Վազգէն Յակոբեան, Աշոտ Յովհաննիսեան*, Երեւան, 1978, էջ 558:

Բնականաբար, ունեցանք մեծ կորուստ վերագտնողի հուզումն ու հաճոյքը, ապա, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մատենադարանի ընդարձակ՝ Մայր ցուցակի մէջ այս ձեռագրի կատարեալ նկարագրութեան հրապարակման ժամանակն անյայտ է[29], *իսկ Աստուածաշնչի գրքերի բնագրերի նկատմամբ այսօր իսկ կայ բնական մեծ հետաքրքրութիւն*[30], *որոշեցինք օր առաջ հրապարակել եւ հայ աստուածաշնչագիտութեանը ներկայացնել վերագտնուած այս կորստի ընդարձակ նկարագրութիւնը: Ձեռագիրն էջերի կամ թերթերի համարներ չունէր, թերթակալեցինք եւ գրանցեցինք Հայերէն ձեռագրերի հիմնական հաւաքածուի կարգային 11103 համարի ներքոյ:*

Մեր նկարագրութիւնից (ձեռագրի երկաթագիր սկզբնատողերը նշանակում ենք գլխատառերով) յետոյ բերում ենք Լալայեանի նկարագրութեան արտաքին յատկանիշները ներկայացնող մասը (յիշատակարանները չենք կրկնում), ապա պարզաբանում ենք վերջինիս խնդրական կէտերը:

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐ
11103

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ (ՄԱՍՆ)

ՁԼԱ = *1282*

ԳՐԻՉ *եւ* ԾԱՂԿՈՂ՝ *Խաչիկ (Խաչատուր):* ՍՏԱՑՈՂ՝ *Կարապետ քհյ (1301 թ.):* ՆՈՐՈԳՈՂ-ԼՐԱՑՆՈՂ՝ *Մովսէս Սպարկերտցի (թ. 2բ-20բ, 183, 189-99):* ՎԵՐԱԿԱԶՄՈՂ՝ *Սարգիս Եդեսացի (1634 թ., ի Լիմ անապատ):*

ԹԵՐԹ՝ *199. չգրուած՝ 1ա-2ա:* ՊՐԱԿ՝ *1-4 + 2-8 + Զ-Ճ-8 (Զ՝ 6, Զ, Ղ, Ճ՝ 10). Ա-Ը*x*8 (Ը՝ 9):* ՆԻՒԹ՝ *թուղթ. արեւելեան (լաթի). երկու տեսակ՝ հինը եւ լրացմանը (համեմատաբար բարակ):* ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ *25*x*17,2:* ԳՐՈՒԹԻՒՆ՝ *միասիւն (19-20,5-12), երկսիւն՝ 1բ-20բ (18,5-11,5. սնկմջ՝ 1 սմ, մէկը՝ 18,5-5), միասիւն՝ թ. 191-9 (19*x*13):* ԳԻՐ՝ *բոլորգիր (բուն գրչինը), նոտրգիր (լրացմանը):* ՏՈՂ՝ *19-20 (թ. 21-190), 28 (2բ-20բ), 23 (թ. 191-9):* ԳԾՈՒՄՆԵՐ՝ *ճնշումով (արտաքին լս.ներին ասեղի տողանիշ անցքեր):* ԿԱԶՄ՝ *տախտա-*

---

[29] Տպուած միակ հատորը (Երեւան, 1984՝ տե՛ս ծ. 26, ձեռագրութիւն 300 ձեռագրի) պատրաստ էր դեռեւս 1974ին, այժմ կայ շուրջ 2700ի ձեռագրութիւն եւս:

[30] Օրինակ, մեր բարեկամ Յովսէփ Ալեքսանեանը (ԱՄՆ) կազմում է Գործք առաքելոցի համեմատական (diplomatic) բնագիրը: Ձեռագիրս հին է եւ, բնականաբար, ունի ուշագրաւ ընթերցումներ. ճաշակ տալու համար բերում ենք Գործք Ժ. 1-6 տների պատկերը (ուղղանկիւն փակագծերի մէջ մեր ձեռագրի ձեւերն են, ուղղագրական երկրորդական ձեւերը չենք նշել, >՝ նշանակում է բառի չգոյութիւն). 21բ«1 Այր մի էր ի Կեսարիայ՝ անուն Կոռնէլիոս [Կուռնելիոս]. հարիւրապետ, ի գնդէ [գնդին] որ կոչէր իտալիացի [իտալացի]. 2 բարեպաշտաւն եւ երկիւղած յԱստուծոյ ամենայն տամբ [տամբն] իւրով. առնէր ողորմութիւնս [ողորմութիւն] բազումս ի ժողովրդեանն. եւ յաղաւթս կայր առ Աստուած յամենայն ժամ: 3 [եւ] Ետես ի տեսլեան [տեսլեանն] յայտնապէս զինն երորդ ժամու աւուրն, զհրեշտակ Աստուծոյ զի մտանէր առ նա՝ եւ ասէր ցնա [> ցնա]. Կոռնէլիէ [Կուռնելիէ]: 4 Եւ նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ. եւ ասէ. Զի՞ է Տէր: Եւ [+ նա] ասէ ցնա. Աղաւթք քո՝ եւ ողորմութիւնք [ողորմութիւն] քո [> քո] ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ: 5 Եւ արդ յղեա արս ի [> ի] Յոպպէ՝ եւ կոչեա զՍիմոն զոմն՝ որ կոչի Պետրոս, 6 նա մտեալ է առ [է առ *սրբագրուած* ի տուն] Սիմոնի ումեմն խաղախորդի, որոյ է տունն մերձ [+ է] ի ծով»:

կէ միջուկով դրոշմազարդ կաշի, դռնակով, Ա. փեղկին վարդեակներով պղնձէ երեք ազուցիչ գամ. աստառ՝ դունաթափ բաց վարդագոյն բամբակէ գործուածք. լուսանցակողերը կարմիր. սկզբնական՝ ԺԲ. դ. վերջի կամ ԺԳ. դ. սկզբի կազմն է, դրոշմազարդերը բարձրարուեստ են եւ ուշագրաւ:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ Կիսախորան-Ճակատազարդ՝ 87ա, 135ա: Լուսանցազարդ՝ պարզունակ հանգուցային (36բ, 39ա, 58բ, 87ա, 115բ, 120բ, 121ա, 135ա), պարզ կարմիր բոլորակներ, մէջները՝ երկաթագիր տնահամարներ: Զարդագիր՝ խոշոր, կարմիր երկաթագիր: Խորագիրք եւ Սկզբնատառք՝ կարմիր եւ սեւ երկաթագիր: Գոյներ՝ կարմիր, բաց շագանակագոյն, սեւ:

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ 66ա, 68բ-9ա, 85ա, 87բ, 115բ, 131բ, 133բ, 169ա. ՅԵՏԱԳԱՑ 134ա (1301 թ.), 134բ (ԺԵ. դ.), 198բ (1634 թ.), 199բ (ԺԷ. դ.), 134ա (1906 թ.): ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ 8 Դեկտեմբերի 2002 թ. նուէր է ստացուել Պետրոս Ասլանեանից (Շարժա, Միացեալ Արաբական Էմիրութիւններ) եւ Սարոյ Խուդավերդեանից (Միլան, Իտալիա). գնել են Երեւանում ապրող, ծագումով վասպուրականցի մի ընտանիքից:

ՎԻՃԱԿ՝ բաւարար: Կազմի երեք կապիչ կաշեփոկերն ընկած, մէջքի՝ Ա. փեղկի ծխնեմասը 9 սմ երկայնքով ճեղքուած, թ. 1՝ արտաքին 2/3ը երկայնակի կտրած (մնում է հիմքին կպած 5-5,5 սմ լայնքի շերտ), եւս 1՝ երեւի չգրուած թերթ կտրած թ. 199ից յետոյ. թ. 1-16՝ խոնաւութեան հետեւանքով պատուած թանձր կամ ցանցառ սեւ բծերով (բնագիրն ընթեռնելի), խոնաւութեան հետք-մգացումներ կան նաեւ բուն մասի բոլոր թերթերի հիմքերի վրայ: Լրացնողը բաւական մեծ վարպետութեամբ նորոգել-ամբողջացրել է բուն մասի բոլոր թերթերի՝ խոնաւութեան հետեւանքով քայքայուած հիմքերը, վերակազմուել է սկզբնական կազմի մէջ: Թ. 1-20՝ փոխարինում են բուն գրչութեան Ա-Ե. պրակներին եւ Զ. պրակի 2 թերթին՝ (5x8) + 2 = 42 թերթ. լրացուած բնագրի ծաւալի եւ բուն գրչութեան խտութեան (1 թերթի վրայ 1200ից աւելի նիշ) համեմատ՝ ներկայ թ. 189-99ի փոխարէն նախապէս եղել է գոնէ 2 պրակ (16 թերթ), սրանց վերջում էլ պէտք է լինէր Խաչիկ գրչի մի այլ յիշատակարան, որ 1634 թ. արդէն ընկած է եղել, այլապէս լրացնողը կվերարտադրէր: Այսպիսով, Խաչիկ գրչի գրած երկմասնեայ (ներկայ թ. 1-134 եւ թ. 135-99) ձեռագիրն ունեցել է Ա-Ճ. (= 19) եւ Ա-Թ.՝ 9, ընդամէնը՝ 28 պրակ, որով՝ 228 թերթ (199-20+42-1+8):

Մնթ. Բուն մասի բոլորգիրն ունի ո՛չ սովորական յատկանիշներ. խորագրերը եւ հատուածների առաջին տողերը զուտ երկաթագիր են, վերջինիս տարբեր կան նաեւ սովորական շարադրանքի մէջ (21բ, տ. 7ն. վջ.՝ «Ա» եւ այլն), ըստ ամենայնի օրինակուած է երկաթագիր գաղափար օրինակից: Տառերի բուն մասերը, ասենք՝ «ա»ի ստեղները, գրուել են ոչ թէ տողից վեր, այլ՝ ստեղների վերին կէսը տողից վեր, ստորին կէսերը՝ տողի տակ, այսինքն՝ տողագծի առանցքի ուղղութեամբ: Այս պատճառով թէ՛ տողերը կանոնաւոր ուղիղ չեն գրուել եւ թէ՛ տառերն են միմեանց համեմատ անհամաչափ: Ցիշատակագրութիւնների մէջ գրչի անուան «Խաչիկ» ձեւի երկու եւ «Խաչատուր» ձեւի մի անգամ առկայութիւնը ենթադրել է տալիս, որ նա աշխարհական էր: Թռուցիկ փնտրեցինք Խաչիկի գրած այլ ձեռագրեր եւ չգտանք: Որեւէ կռուան չունենալով հանդերձ, շատ հաւանական ենք համարում, որ ձեռագիրը պէտք է գրուած լինի Վասպուրականում կամ մերձակայ մի վայրում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 2բ-5ա ա. Ցառաջաբան գրոց Գործոց առաքելոց - *Որք միանգամ ճշմարիտ եւ կարեւոր աստուածամերձ... համբերէին բաղում եւ մեծամեծ վշտաց: բ. 5բ* Գիր Գլխոց Գործոց Առաքելոցն - *Ի հարցն եւ ի վարդապետաց... մաւտ առ նոսին զներքնաբաժինսն նշանակեսցուք: Տունք ԺԳ.: դ. 5բ-8ա* Վասն [= Գլուխք] Գործոց Առաքելոց - *Ա. Վասն առ ի յարութենէ վարդապետութեանն Քրիստոսի եւ երեւելոյ աշակերտացն... Խ. Վասն վիճելոյ Պօղոսի ընդ հրեայսն, որ էին ի Հռոմ. Տունք ՃՀԲ.: դ. 8ա* Ի գիրս Գործոց առաքելոց ընթերցուածք ԺԶ. - *Ա. ընթերցուածն տունս ԽԱ. ... ԺԶ. Ընթերցուածն տունս ՃՂ., Գլուխք Խ., Վկայութիւնք Լ., Տունք ՄՇԺԶ.: ե. 8ա-85ա* Գործք առաքելոց - *Զբանն առաջին զոր արարի վասն ամենայնի, ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել... Քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ եւ ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի, անխափան՝ ամենայն համարձակութեամբ: Գործք Առաքելոցն:*

Ծնթ. Սկզբից մինչեւ 20բ՝ Գործք Թ. 38 «աղաչել՝ զի մի՛ դանդաղեսցի գալ առ նոսա», լրացնողի ձեռքով է, լրացման վերջը՝ «-եսցի գալ առ նոսայ» բուն գրչի ձեռքով կայ նաեւ՝ 21ա:

2. 85ա-6բ ա. Ցառաջաբանութիւն Է. թղթոցն կաթուղիկէից. Գիր գլխոց իւրաքանչիւր թղթոցն կաթուղիկէից *[= Գլուխք Թղթոյն Յակոբայ] - Թուխտ Յակովբու. Ընթերցուած Ա. Յակովբոս Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի. Ա. Վասն համբերութեան... [Զ. գ.] Խրատք առանձին եւ իւրաքանչիւր որոյն որոյն պատշաճ հաւատովք: Եղբա՛ր իմ, եթէ ոք եթէ սպասաւոր՝ պարտ է լինել ընգերին փրկութեան: Տունք ԻԵ.: Յակովբա Թուխթս գրեցաւ յերուսաղէմէ առ հեբրաեցիսն ի սփիւռս: Ի Յակովբու Թղթիս Ընթերցուածք Բ., Ընթերցուածն Ա.՝ Տունս Ճ., Ընթերցուածն Բ.՝ Տունս ՃԻԵ.: Գլուխք Զ., Վկաութիւնք Դ., Տունք ՄԼԷ.: բ. 86բ-97ա* Թուղթ Յակոբու է ի փառս Աստուծոյ *// (87ա) - ՅԱԿՈՎԲՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՏԵԱՌՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ. ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱԶԳԱՅ... զի որ դարձուսցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ի մահուանէ, եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց (այլ ձեռքով՝ «իւրոց»): Կատարեցաւ Թուղթ Յակոբայ առաք// (97ա)ելոյ: Տունք ՄԼԷ.:*

Ծնթ. Թղթի առաջին՝ 87ա ամբողջ էջը մէջընդմէջ՝ կարմիր եւ սեւ տողերով երկաթագիր է, ներառեալ՝ «...փորձութեանց» (Ա. 2):

3. 97ա ա. Գլուխք Առաջին Թղթոյն Պետրոսի. *Տունք ԻԵ.: Յառաջին Թղթին Պետրոսի Ընթերցուածք Բ., Ընթերցուած Ա.՝ Տունս ՃԵ., Ընթերցուածն Բ.՝ Տունս ՃԽԷ.: Գլուխք ութ, Վկայութիւնք ԺԴ., Տունս ՄԺԶ.: բ. 97ա-107բ* Թուղթ Պետրոսի [առաջին] - *ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի, ընդրելոցն նժդեհից, որ ի սփիւռս Պոնդացւոց եւ Գաղատացւոց եւ Կապադովկացւոց... Ողջոյն տալիք միմեանց ի համբոյր սրբութեան: Խաղաղութիւն ընդ ձեզ ամենեսեան, որ էք ի Քրիստոս Յիսուս. ամէն:*

4. 108ա ա. Ի Պետրոսի յերկրորդ թղթիս *Ընթերցուած Ա., գլուխ Դ., Վկայութիւնք Գ., տունք ՃԾԴ.: բ. 108ա-15բ* Թուխթ Պետրոսի [երկրորդ] - *ՇՄԱՒՈՆ ՊԵՏՐՈՍ ծառայ եւ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հանգիտապատիւ մեզ հասէքդ, հաւատոց յարդարութիւն Աստուծոյ... Աճեցէ՛ք շնորհաւք եւ գիտութեամբն Տեառն մերո եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի. նմա փառք՝ եւ այժմ եւ յաւիտեանս. ամէն:*

5. 115բ ա. Ցառաջնում թղթին Ցոհաննու Ընթերցուածք Բ., Ընթերցուած Ա.՝ Տունս ՃԺԵ., Ընթերցուած Բ.՝ Տունս ՃԼԹ., Գլուխ ուԹ, Վկաութիւն Ա., Տունս ՄԾԴ.: բ. 115բ-25բ Թուղթ Ցոհաննու առաջին - ՈՐ ԷՐՆ Ի ՍԿԶԲԱՆԷ, զորմէ լուաքն... Որդեակք, պահեցէ՛ք զանձինս ի կռապաշտութենէ:

6. 125բ ա. Ընթերցուած Ա., Գլուխք Ա., Տունս Լ.: բ. 125բ-7ա Թուղթ Բ. Ցոհաննու - ՑԵՐԻՑՈՒԷ ԱՌ ԸՆՏՐԵԱԼ ԿԻՐԵԱՅ... Ողջո՛յն տան քեզ որդիք քեռ. քո ընտրելոյ: Շնորհք ընդ ձեզ:

Մնթ. 125բ ստ. լ.ում, այլ ձեռքով, ԺԸ. դ.ի նոտրգիր՝ «Բօվանդակն ԾԳ. Ցոհաննու յառաջին Թուխտն խե. սէր ունի պատուական, Բ. հրաժարական՝ թէ Մի՛ սիրէք զաշխարս, Զ. գրգռական, որ ասէ՝ Սիրելիք»:

7. ա. 127ա Ընթերցուած Ա., Գլուխ Ա., Տունս ԼԶ.: բ. 127ա-8բ Թուղթ Ցովհաննու Երրորդ - ՑԵՐԻՑՈՒԷ ԱՌ ԳԱՅԻՈՍ սիրելի... սիրելեաց մերոց իւրաքանչիւր յանուանէ:

8. 128բ ա. Ցուդայի թղթիս ընթերցուած Ա., Գլուխ Դ., Վկաութիւն Բ., Տունս ԿԱ.: բ. 128բ-31բ Թուղթ Ցուդայի եղբաւր Ցակոբու - ՑՈՒԴԱՅ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ եւ եղբայր Ցակովբայ... յառաջ քան զամենայն յաւիտեանս, եւ այժմ եւ ամենայն յաւիտեանս. ամէն: Միահամուռ թղթոց Կաթողիկէից տունք ՌՃՂԳ.:

9. 131բ-3բ Աղերս Եւթաղեայ - ԱՄԵՆԱՅՆ ԻՐԻՔ ամենայն ուրեք ժամանակ է... զԱստուծոյ եւեթ մարդասիրութիւնն: Տունս ԻԷ. Միահամուռս ամենայն Կաթողիկէիցն թղթոցն ընթերցուածք Ժ., Վկաութիւն ԻԴ., Գլուխք ԼԱ., Տունս ՌԺԴ., միանկամայն տունք ՌՃՂԴ.:

Մնթ. Կաթողիկեայ թղթերի Առաջաբանը չկայ, միայն խորագիրն է (85ա), լրիւ ունի միայն Ցակոբու թղթի «Գլուխք»ը (85ա-6բ), տնատումներին վերաբերող մնացեալ տեղեկութիւնները, որ ըստ երեւոյթին նախասկեւռացիական են, ամբողջութեամբ վերարտադրել ենք: Գործքի եւ թղթերի տնահամարները լուսանցքներում նշանակուած են կարմիր երկաթագրով, կրկին՝ կարմիր շրջանակների եւ սակաւաթիւ լուսանցազարդերի մէջ կամ վերն ու վարը պատիւի նշանով, աւելի յաճախ՝ առանց որեւէ լրացուցիչ նշանի (վերջին ձեւով է նաեւ յաջորդ՝ Ցովհաննու Աւետարանի մասը):

10. 135ա-98ա Աւետարան ըստ Ցոհաննու. Աւգնեայ Ցիսուս. - Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ... եւ ո՛չ աշխարհս բաւական էր տանել զգիրսն, որ եթէ գրեալ էին: 198ա [Իրք կնոջն շնացելոյ] - Գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր... յայսմ հետէ մի՛ մեղանչէր:

Մնթ. ա. Առաջին՝ 135ա ամբողջ էջը մէջընդմէջ՝ կարմիր եւ սեւ տողերով երկաթագիր է, ներառեալ՝ «...նովաւ կեանք» (Ա. 4): Լրացնողի ձեռքով են գրուած Թ. 183 ԺԴ. 21 - ԺԵ. 2 («[սիր]է զիս... որ բերէ պտուղ՝ սրբէ զնա») եւ Թ. 189-99 ԺԷ. 10ից («Եւ որ ինչ իմ է, ամենայն քո է...») մինչեւ վերջ: «Իրք»ը «Կիրք կնոջն» լ.ային խորագրով եւ բուն գրչի ձեռքով կայ նաեւ շարադրանքի մէջ՝ 160բ-1բ:

Մնթ. բ. Ձեռագրի հին՝ բուն մասը ծայրէծայր սրբագրուած է գրչի ձեռքով՝ բացթողումները լրացուած են լուսանցներում կամ տողամէջերին, աւելորդ տառերն ու բառերը՝ ջնջած: Հազուադէպ կան նաեւ նոտրգրով՝ այլ ձեռքով արուած սրբագրութիւններ, որոնք մեծ մասամբ շեղւում են Աստուածաշնչի ընկալեալ բնագրից: Լուսանցներում կան գրչի (երբեմն՝ նաեւ այլ) ձեռքով արուած տօնացուցային նշումներ. 70բ՝ Գործք, ԻԴ. 1 «Ծաղկազարդ է, Է. կիր[ակէ]», 90բ՝ Ցակ. Բ. 14 «Շբ. Ցովաննու դիր որ չմոռանաս», 99բ՝ Ա.

Պետր. Բ. 1 «Կիր[ակէ] Աշխարհամատր[ան]», 115բ՝ Ա. Յովհ. 1 «Երեւման խաչին աստ հանդիպի», 125բ՝ Բ. Յովհ. Ա. 1 «Ծաղկազարդ է, աւ. աւ. Ղկ.», 132ա՝ Աղերսի սկզբում «Հոգոյ գալըստեանն եւ ի կատարել աւուրցն», 182բ՝ Յովհ. ԺԴ. 15 «Պենդէկոստ» եւ այլն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

ա. 66ա (ստ. լս.ին) Տէ՛ր իմ եւ յոյս, մեղա, անաւրինեցայ, ողորմեա՛յ անպիտան մեղուցելոյս, եւ քեզ փառք յաւիտ[եանս]. ամէն:

բ. 68բ-9ա (ստ. լս.ին) Մեղա Աստուծոյ, կործանեաց զիս չարագործն թշնամին եւ կամի զիս որսալ, մեղա Աստուծոյ. // Քրիստոս, ողորմի՛ քո գրողին:

գ. 85ա Դա՛սք լուսերամից, վասն սիրոյն Քրիստոսի զմեղուցեալ գրիչս՝ զանարժան անպիտանս յիշեսջիք, եւ Աստուած յիշէ զյիշողք. ամէն:

դ. 87բ (ստ. լս.ին) Տէ՛ր, յոյս իմ, աւգնեա՛յ ինձ:

ե. 115բ Ողորմեա՛յ Քրիստոս Աստուած գրողի սորայ. ամէն:

զ. 131բ ՁԽաչատուր գրիչ յիշեսջիք, եւ Աստուած յիշողացդ ողորմ[ի]. ամէն:

է . 133բ (գրչի) ՓԱՌՔ ՄԻԱԲՈՒՆ եւ անբաժանելի սուրբ Երրորդութեանն յաւիտեանս. ամէն, որ արժանի արար զանպիտանս հասանել ի վերջ գծիս: Յերես անգեալ աղաչեմ զդասս լուսերամից՝ յիշել զայնոսիկ, որ աւգնեցին մեզ ի գինս քարտիսին: Գրեցաւ ի թուՀ՚ ՁԼԱ (1282), ձեռամբ անարժանիս եւ մեղապարտիս Խաչկա: Եւ որք յիշեն՝ եւ նոցա ողորմեսցի Քրիստոս՝ յայն սոսկալի եւ սարսափելի ահեղ աւուրն աներեկի. ամէն: // (134ա) Վասն որոյ եւ.

Ծնթ. Յիշ.ս չկայ ի՝ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դ., Կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 528-30 (1282 թ. մասն է, ուր կայ միայն երեք ձեռագրի յիշատակարան):

ը. 169ա (ստ. լս.ում) ՁԽաչիկ գրիչ յիշեա՛յ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

Թ. 134ա (1301 թ., ստացողի, գրուած որպէս շարունակութիւն գրչի գլխաւոր յիշ-ի, անվարժ բոլորգիր) ԵՄ ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ՍՏացայ զգիրքս Գործոց առաքելոց՝ յիշատակ ինձ եւ Սարգիս միակեցին եւ ծնողաց մերոց. եւ զՅոհանէս աւետարանիչն մեզ բարէխաւս եւ աւգնական յաւուրն աներեկի. որք կարդայք եւ աւգտիք ի սմանէ՝ յիշեսջիք զմեզ ի մաքրափայլ յաղաւթս ձեր. եւ ինքն յոյսն մեր եւ ապաւէն Քրիստոս Աստուած, որ առատն է ի պարգեւս, տացէ իւրաքանչիւր զվարձս. եւ որք զմեզ յիշելոյ արժանի առնեն, յիշեալ լիցին ի տիեզերական ահեղ ատենին եւ լսել զերանաւէտ ձայնն՝ եթէ. Եկա՛յք աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէ՛ք՝ պատրաստեալ իմ ձեզ զարքայութիւնն. ամէն: ՅԱՄԻ ՋԾ (1301): // (134բ. այլ անվարժ բոլորգիր) Աղաչեմք պաղատանաւք սրտիւք, հոգով զորդիսդ լուսոյ, որք զԱւետարանս զայս երգէք կամ աւրինակէք, յիշեսջիք զԿարապետ աղքատ ոգի քահան[այ] եւ զծնողսն իմ՝ Ծախպետ եւ զԿանաց՝ զփոխեալսն ի Քրիստոս: Արդ, յերես անգեալ աղաչեմ զամենիսեան՝ զԱստուած ողորմին սրտի մտաւք ասացէ՛ք, քանզի յոյժ փափաքանաւք ըստացայ զսայ ի հալալ արդեանց իմոց՝ ի վայելումն

անձին իմոյ եւ որդոյ իմոյ Թաթոս եւ Դաւթի, եւ եղբաւր իմո Յոհանիսի. եւ յորս յիշեսջիք մեզ, ի նմին եւ դուք յիշեալ լիջիք:

Ծնթ. Ստացողն իր յիշատակարանի առաջին կէսը՝ 134ա էջը որպէս գրչի գլխաւոր յիշատակարանի շարունակութիւն գրել է տուել աւելի վարժութիւն ունեցող մէկին, յաջորդ էջը՝ «յիշեցէ՛ք» մասը, գրել է երեւի ինքը, այսինքն՝ 134բ էջի տարբեր ձեռքով գրուածը համարում ենք նախորդ էջին գրուածի տրամաբանական շարունակութիւն: Կարապետ քահանան ձեռագրի առաջին ստացողն է՝ գրչութիւնից 19 տարի յետոյ (գրուել էր վաճառելու համար, որի պատճառով յիշ-ը կիսատ էր թողնուել՝ 134ա «Վասն որոյ եւ»): Ցիշ.ս չկայ ի՝ ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 1-4 (1301 թ. մաս՝ կայ 6 ձեռագրի յիշատակարան):

ժ. 134բ (ԺԵ. դ., անվարժ բոլորգիր, գունաթափ, դժուարընթեռնելի) Մելքիսէթ երեցս ու զՍտեփանն ու զՄարգարիտս յիշեսջիք ի ձեր մաքրափայլ յաղաւթս. Աստուած զձեզ յիշէ ի յիւր արքայութիւն. ամէն:

ժա. 198բ (1634 թ., նոտր) Փառք եզակի տէրութեանն եւ եռահիւսակ անձնաւորութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Շնորհիւ Տեառն եւ ողորմութեամբ նորին վերստին նորոգեցաւ եւ կազմեցաւ հոգիաբողբոջ բուրաստանս՝ սուրբ տառս այս Գործք առաքելոցն եւ Կաթուղիկէքն ու Ցոհանու սուրբ Աւետարան ի թուականիս հայոց ՌՁԳ (1634), ի ծովապատ Լիմն անապատիս, ընդ հովանեաւ գեղեցկավայելուչ եւ զմպեթայարկ բարձրահայեաց Սուրբ Գէորգեա զաւրավարի տաճարիս, եւ ի յառաջնորդութեան այսմ մեծափառ ուխտիս եւ մենաստանի տէր Ստեփանոս վարդապետի եւ այլ միաբան եղբարցս ԿԲ (62) եւ աւելի, որ աստ կան հաւաքեալ ի փառս ամենազաւր փրկչին մերոյ Ցիսուսի Քրիստոսի:

Արդ, յիշեցէ՛ք ի Քրիստոս զյիշման արժանին՝ զտէր Ներսէս ռաբունապետն* պանծալի, որ է ի յերկրէն Մոկաց Մանկաց, որ նա է եղեալ պատճառ սկզբման եւ հաստատութեան այսմ միաբանութեան՝ ՌՀ (1621) թվին գալով ի Մեծ Ա//(199ա)նապատէն՝ հանդերձ մէկ քանի եղբարբք եւ հաստատելով զտեղիս այս միաբանակեցաց եւ քաւարան մեղաւորաց. եւ ինքն փոխի մահուամբ առ Քրիստոս թվին ՌՀԴ (1625), որ եւ զինքն ընդ երկոտասան վարդապետացն դասակից եւ պսակակից արասցէ Քրիստոս Աստուած մեր. եւ կենդանի աղօթք նորին ի վերայ ամենայն հաւատացելոց եւ մեզ*. ամէն. եղիցի եւ եղիցի: Եւ յետ մահուան սորին յաջորդէ զտեղի նորին Ստեփանոս վարդապետն Ցաթխնեցի, որ եւ ի հրամանէ նորին եւ կամակցութեամբ միաբան եղբարցն, Սպարկերտցի Մովսէս անարժան զպակասն գրեցի մաքուր աղօթիւք եղբարցն՝ եւ յուսալով յողորմութիւն փրկչին: Եդեսացի պատուական եղբայրն մեր տէր Սարգիս յանձն էառ կազմել: Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան՝ որք պատահիք սմա տեսութեամբ կամ կարդալով՝ յիշել զվերոյգրեալ Ստեփանոս վարդապետն եւ զմիաբան եղբարքն ի բարին, որ պատճառ եղան նորոգման սորա. եւ զիս՝ զանարժանս, որ փոխանակ նորոգութեան կրկին աւերեցի. աղաչեմ զթերին լնուլ եւ զաւելորդն բառ//(199բ)նալ, եւ բազում մեղաց իմոց թողութիւն հայցել ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. եւ ինքն Տէրն մեր Ցիսուս Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ՝ յիշողացդ լի սրտիւ եւ բոլոր հաւատով, եւ մեզ՝ յիշեցելոցս ողորմեսցի յաներեկ աւուրն եւ անաչառ ատենին, եւ արժան առնել յերկնից արքայութեանն եւ անտրտում ուրախութեանն, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ծնթ. ա. Աստղանշակիր «պետն» վանկը, «եւ մեզ» դարձուածը նոյն ձեռքով լրացուած լս.ում եւ տողամիջին: Ցիշ-ս «ՊՊԹ, Հմր 482» նշումով, իմա՝ Ե. Լալայեանի ցուցակի անտիպ մասից առնելով, տպուած է՝ ԺԷ. դ-ի յիշ-ք, Բ., էջ 558, Հմր 831, ուր կայ ծանոթութիւն՝ «Համառօտուած տե՛ս նաեւ Հմր 6333, էջ 46բ, յիշտ. Հմր 207», սակայն նշուած Հմր 207ը նոյն 1634 թ. է, այս յիշ.ի տեղեկութիւններով եւ շարահիւսական կաղապարներով իսկ սրան շատ նման՝ նորոգման յիշ.ն մի Նարեկի, որ է՝ «26x16 եւ 6, համակ բորբոս[ն]ած, թէեւ կարմրադեղով ծաղկած, մէն մի էջը 22 տող, բուն յիշատակարանն ինկած եւ վերակազմութեանն է...»: Ցիշ.ը գրուած է մեր ձեռագրի կազմող Սարգիս Եղեսացու ձեռքով եւ նրա անունից: Նշանակում է՝ 1634 թ. շուրջ Լիմ անապատում արւում էին հին՝ վնասուած ձեռագրերի նորոգման գուցէ եւ ծրագրուած աշխատանքներ:

Ժբ. 199բ (ԺԷ. դ., նոտր, ծածկագի՞ր) Սաի ադա յպղա անբսդ պզաիլտ իաչա:

Ժգ. 134ա (1906 թ., մանուշակագոյն թանաքով, շղագիր) Ցիշատակարաններս ընդօրինակեցի. Օ. Բարաղամ[եան]. 1906, Ցուլիս 13:

ԳՐՉԱՓՈՐՁ 199բ, ԺԸ. դ-ի՝ «Տաղ ասացեալ առ սուրբ կոյսն», ապա՝ ջնջած տաղի ձայնագրուած սկի՞զբ երկու տող: 116բ-7ա՝ լուսանցներում մատիտով նշումներ, խզբզոց:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

«482

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ, ԹՈՒՂԹՔ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՔ, ԱՒԵՏԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Հին՝ Լիմ 91:

ԼԻՄ ՁԼԱ

եւ ՁԾ = 1282 եւ 1301

ԳՐԻՉ՝ *Խաչիկ, Մովսէս Սպարկերտցի:* ԾԱՂԿՈՂ՝ *անյայտ:* ԿԱՁՄՈՂ՝ *Սարգիս Եղեսացի:* ՍՏԱՑՈՂ՝ *Կարապետ քհյ:*

ԹԵՐԹ՝ *42 + 160 + 54 + 12 [= 268]:* ՆԻՒԹ՝ *թուղթ:* ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ *25x14:* ԳՐՈՒԹԻՒՆ՝ *միասիւն:* ԳԻՐ՝ *նախնական բոլորագիր:* ՏՈՂ՝ *20:* ԿԱՁՄ՝ *կաշեպատ:*

ՄԱՆՐԱՆԿԱՐ՝ *չունի: Խորան՝ չունի: Կիսախորան՝ 1 [հատ]: Լուսանցազարդ՝ չունի: Սկզբնատառք՝ պարզ գլխագրեր:*

ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ *սկզբից 42 եւ վերջից 12 թերթ թափուած է եւ նորից գրուած նոտրագրով. Յովհաննու Աւետարանը առանձին է՝ միայն Գործք առաքելոցի հետ կազմած, սրա յիշատակարանը թափուած է»:*

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԽՆԴՐԱԿԱՆ ԿԷՏԵՐԻ.

ԹՈՒԱԿԱՆ *իբրեւ գրչութեան երկրորդ թուական նշանակել է ստացման 1301ը՝ «ՁԼԱ եւ ՁԾ = 1282 եւ 1301», որ սխալ է:*

ՏԵՂԻ *1634 թ. յիշատակարանի համաձայն գրչութեան վայր է համարել «Լիմ»-ը, որ լրացման վայրն է:*

ԳՐԻՉ *է համարել նաեւ լրացնողին. մեր բնորոշումն աւելի ճշգրիտ է:*

ԾԱՂԿՈՂ համարում է անյայտ, սակայն ակնյայտ է, որ գրչութեան եւ յարդարանքի մէջ գործածուած են միեւնոյն գոյները, երանգները եւ գծաձեւերը, որով՝ բաւական զուսպ եւ նախնական ոճի ծաղկումը Խաչիկ գրչի ձեռքով է:

ԹԵՐԹ 42 + 160 + 54 + 12 անբացատրելի է. գումարը 268 է, որ եթէ էջաքանակ է, ապա ձեռագիրը պէտք է ունենար 134 թերթ, որ անհնար է. եթէ 42ը սկզբի իսկ 12ը վերջի՝ իր հաշուած ընկած թերթերի քանակներն են, էլի մնում է 160 + 54, որ անում է 214, որ կրկին հեռու է մեր արած թերթակալման արդիւնք 199ից, ուրեմն՝ հաշիւն արել է շփոթ եղանակ(ներ)ով:

ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25x14. լայնքի մեր արձանագրած 17,2ի համեմատ 14ը երեւի վրիպում է (Օ. Բարաղամեանը լայնքը նշանակել է 17 սմ):

ԳՐՈՒԹԻՒՆ համարել է՝ միասիւն. նկատի է ունեցել միայն բուն՝ հին գրչութիւնը:

ԳԻՐ «նախնական բոլորագիր». կրկին նկատի է ունեցել միայն բուն գրչութիւնը:

ՏՈՂ «20». հաշուել է բուն գրչութեան պատահական մի էջ:

ԿԱՋՄ սոսկական «կաշեպատ» բնորոշումն իր թռուցիկ եւ շտապ արուած նկարագրութիւնների ոճով է:

ՄԱՆՐԱՆԿԱՐ հարցի պատասխանի աղքատիկութիւնը եւ պակասաւորութիւնը կրկին արագ եւ հապճեպ նկարագրելու հետեւանք են:

ՎԻՃԱԿ՝ «սկզբից 42» թերթ ընկած եւ նոտրով նորոգուած լինելու հաշիւը ճիշտ է եւ հիմնուած է պրակահաշուի վրայ, «վերջից 12 թերթ թափուած» լինելու հաշիւը սխալ է, պէտք է ասէր՝ «16»: Իրարից տարբեր երկու պրակահամարների առկայութեան վրայ է հիմնուած եւ իրաւացի է նաեւ հետեւեալը՝ «Յովհաննու Աւետարանը առանձին է՝ միայն Գործք առաքելոցի հետ կազմած, սրա յիշատակարանը թափուած է»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ արագ արուած իր ցուցակի ոճով ունի միայն ընդհանուր անունը:

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ առանց էջահամարների ունի միայն մեր՝ է. («Գործք առաքելոցի վերջում» բնորոշումով, չունի սրա վերջի՝ «Վասն որոյ եւ»), թ. (չունի 134ը էջի մասը լրիւ, սա չունի նաեւ Օ. Բարաղամեանը), ժա. (չունի «Փառք... ամէն» սկսուածք 3 տողը): Ընթերցման սխալներն աննշան են՝ հակառակ որ Հմր 485ի 1314 թ. գրչութեան յիշատակարանի առիթով Լ. Խաչիկեանն իրաւացիօրէն գնահատել ու գրել է՝ «Լալայեանի անտիպ ցուցակի ինչպէս այս, այնպէս էլ միւս յիշատակարանները արտագրուած են բազմապիսի սխալներով, բառերը ճիշտ չեն անջատուած, կան տառասխալներ եւ այլն, դժուարութեամբ է հնարաւոր լինում վերծանել»[31]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ. ըստ նկարագրման իր որդեգրած ոճի՝ տուել է ձեռագրին վերաբերող միայն ընդհանուր եւ թռուցիկ պատկերացում, բնագրական խնդիրներին վերաբերող տեղեկութիւններ չունի, յիշատակարաններից օրինակել է միայն «կարեւորագոյն»ները:

---

[31] ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 101, ծ.: